

Ռոդոդոփ. (սեկնելով, հեզմորեն). — Միաս բարով մանկիկ:

Փիլիպ. — Ո՛ր կ'երթաս:

Ռոդոդոփ. — Կ'երթամ Պապի ջանք բարենելու: Եւ իրեն հարցնելու թէ ստո՞ղք է արդեօք ինչ որ ինձի պատմեցիր:

Փիլիպ. (կեցնելով գայն շտապաւ). — Ո՛չ, ո՛չ, Աստուծոյ սիրոյն. մի ընե՛ր այդ բանը:

Ռոդոդոփ. — Ա՛հ, ուրեմն սուտ ըսիր:

Փիլիպ. — Վայ ինձ. յանձն կ'առնէի աւելի մոռնիլ քան...

Ռոդոդոփ. — Այն ժամանակ թող որ զայն հարցնեմ Պապիին:

Փիլիպ. — Ո՛չ, պատշաճ չէ:

Ռոդոդոփ. — Բայց ինչո՞ւ համար:

Փիլիպ. — Բայց չե՛ս հասկնար, պիտի կարծուի որ ես իմ յաշոգակութեանս վրայ կը պարծնեմ:

Ռոդոդոփ. (ժաղարածելով). — Խեղճ համեստաբան (կ'իմնէ):

Արմանդ. — Արդեօք չամ:

Փիլիպ. — Բարեբաղդաբար քիչ մը:

Արմանդ. (դէպ ի դռն ուղղւելով). — Խեղճ Պապիս... Միաս բարով խաղալիկներ:

Փիլիպ. — Ո՛ր կ'երթաս:

Արմանդ. (ցոյց տալով Պապուն գտնուած սեւ նեակը). — Զգեստ հանելու:

Փիլիպ. (զայրացկոտ). — Ոչ, ոչ, հոն մի՛ երթար:

Արմանդ. — Այս սքանչելի է, ինչո՞ւ:

Փիլիպ. (ցած ձայնով և լլջօրեն). — Որովհե՛ստ եւ ներսը առնես մը կայ:

Արմանդ. (վախցած). — Առնես մը:

Փիլիպ. — Այո, խոշոր առնես մը, երկայն պիտե՛րով, այսպէս: (կը ցոյցնէ):

Արմանդ. — Տէ՛ր ողորմա՛: Այն ժամանակ մայրիկին սինեակը կ'երթամ:

Փիլիպ. (գոճ). — Ապրի՛ս:

Արմանդ. (դուրս նշնելով). — Առնես մը... պըռռ:

(Շարունակելի)

Ա. ՄԱՌԵՍՔԱՆԻ

Բրգժ. ԶԱՌԱՎ ՔԻՐՈՅԵԱՆ

ՏԵՍԻՒԼ Է՛

ՓԻԼԻՊՈՍ յետոյ ԱՐՄԱՆՈՍ

Փիլիպ. — Այ թշուառութեան... Եւ եթէ ստուգել հարցնելու ըլլալ զայն պապիին: Բաւ է, դուրս հանենք դարձեալ այն կարկանդակը և տեսնենք թէ միջոց ու կայ վերջացնելու. զայն: Արմանդ. (մոռնելով). — Փիլիպպոս:

Փիլիպ. (ինքն իրեն) Այ ուրիշ մէկ ձանձրացուցի՛ մը:

Արմանդ. — Պատասխան չե՛ս տար:

Փիլիպ. (կարկանդակը գրպանը դնելով, բերանը չեցուն). — Զմա կ'ուզէիր:

Արմանդ. — Ո՛հ, ինչո՞ւ այդպէս կը խօսիս:

Փիլիպ. — Ահաւս կը ցաւի:

Արմանդ. (հեզմորեն). — Խեղճ պզտիկ: Պապերս ինչ հասեր է:

Փիլիպ. (ինքն իրեն). — Եթէ այդ ըսեմ իրեն, հոն կ'երթայ և ամէն բան կը յայտնուի: Եթէ ոչ ըսեմ իրեն...

Արմանդ. (պնդելով). — Այո թէ ո՛չ:

Փիլիպ. (համարձակ). Ո՛չ:

Արմանդ. (ցաւած). — Ո՛րչափ կը ցաւիմ ես:

Փիլիպ. — Բեկանդ պիտի անուշենէիր, այնպէս չէ՞:

Արմանդ. — Ցայտնի է, միշտ մեզի շատ մը աղուոր բաներ կը բերէ:

Փիլիպ. — Կեցցես: Քեզի անոր նուէրը պէտք է, ոչ թէ պապերնիս:

Արմանդ. — Երկուքն ալ միասին: Բայց ինչո՞ւ համար եկած չէ:

Փիլիպ. — Ո՛հ, չնչին դէպք մը:

Արմանդ. — Գնացրէ կորսնցուցեր է:

Փիլիպ. — Ո՛չ. ձիէն վար գլորեր է:

Արմանդ. — Բայց նա բնաւ ձի հեծնել չի գիտեր:

Փիլիպ. (պատրաստ). — Հիշտ անոր համար քաղ ընկած է և վերադարձեր է:

ՖԻԼԵԶՆՈՅԻ «ՆՈՐ ՕՐ» ԼՐԱԳԻՐ

ՊԱՏ. ԽՄԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իսկապէս անակնկալ մ'ըլաւ մեզ Զեր

լրագրի Յունուար 8-ի թիւը:

Անոր առաջին էջին վրայ հրատարաւ

կուած էր «Անդամի Ազգասիրտի»

վերնագրով յօդուած մը, որուն տակ ստաւ

լրագրի էր մի ոմն Մ. Յ. ԱԷԹԵԱՆ:

Արդ շիտեւ կու տանք Զեզ, Տիար Խըմ

բագրի, որ հանդիք շատ առ շատ տեսնել

ԲԱԶՄԱՎԷՊԻ մէջ վերոյիշեալ յօդուածին

«Բնագիրը», որ գրուած և հրատարակուած

էր երկու տարի առաջ մեր կողմանէ

(1924 թ. Յունուար) ու կը կրէ իմք.

ստորագրութիւնը:

Յարգանք

Զ. Զ. ՏԱՅԵԱՆ